

զիսաշ իւր տանէին ծեծելով և կառափ տելով, և քրտունքն երեսէն խառն ընդ արեան վաղեալ, և ես խղճացի զնա և քրտունքն յերեսաց սրբեցի, զի այն յամեցայ. և խեղճ հիւանդն այն սկսաւ անարգել և նզովել, և աղախինն ցոյց ետ զմանտիին, և նա կրկին հայհոյեաց. և ասաց թէ լուա զդա. և աղախինն լրւաց և ոչ ել նկարեալ պատկերն փըրկչին. նա պառկած տեղացն ստիպէր թէ տաք ջուրով լուա զդա. և աղախինն եռացոյց զնուրն և լուաց կրկին և երեքին անդամ. նա այլ գերագոյն երսիւր 'ի վերայ մէնտիլին. և զարմացան թէ այս ինչ հրաշք է. և ծագեաց նոյն կէտն շնորհքն աստուածային 'ի վերայ հրէին այն. և ասաց թէ բեր զդա և արկ 'ի վերայ իմ. և յորժամ տարեալ աղախինն և ձգեաց 'ի վերայ հիւանդին և առժամայն բժշկեցաւ, և վաղվաղակի ելեալ զնաց զինի նորա տեսանել թէ զինչ առնիցեն թիսուսի: Եւ անտի գնաս 'ի մուլթ շուկան, որ երկու կողմն քէմէրներ է, որ անտի անցուցանէին. և անդ ծեծեցին զտախտակն, թէ այս է սուտ մարգարէ, եկայք տեսէք զդա. այն տեղն անիծեց որ աւեր մնաց. եթէ կամենան շինել՝ առաւաօտն վիրան կուգտնեն. անոր համար մարդ բան կարող չէ շինելու. այսչափ նախատինք արարին ֆրիստոսի, և սուրբ Աստուածածին դեռևս ոչ գիտէր. ազդ արաւ աւետարանիչն Յոհաննէս. և այս տեղս հանդիպեցաւ միածնի որդւոյ իւրոյ, և այն վերոյդրեալ տեղն սուրբ Աստուածածին անէծ, և Մարիամանք զհետ նորա:

Եւ անտի թապախանան գնայն սուրբ Ստեփանոսի եկեղեցին, որ այժմուս բանդ են արարեալ. զպարտականքն թող կու տան ներս և ոչ կարէ ելանել. քանզի դուռն փակ և բանալի չունի. այսպէս սահման մի եղեալ են. եթէ զայ պարտատէրն հանէ՝ կու ելանէ, և եթէ ոչ՝ կու մնայ ներսն: Սորա քովերն թապախներ է. անդ կայ փոքրիկ դուռ մի, ապա տարին զնա սիւնն կապեցին կամ Գողգոթա 'ի խաչ հանելոյ:

Կը շարունակուի:

ՄԱԴՐԻԾ ՖԱԼՈՆԻ

Բորդոյ-Վէքքիոյէն ելլալով և երթալով հիւսիսային արևմտեան կողմը, դէպ 'ի կղզւոյն խորերը, շուտով մը գետինը կը սկսի բարձրանալ, և երեք ժամուան միջոց ծամածուռ ճամբաներէ քալելէ ետքը, (զորոնք կը խափանեն խոշոր ժայռերու կտորուանք և երբեմն կը կտրեն խոխոմներ,) ընդարձակ մաքի մը եղերը կ'ելլրցուի: Մաքին կորսիկացի հովուին և դատաւորաց հետ աւրուողներուն հայրենիքն է: Գիտնալու է որ կորսիկացի մշակը արտը աղրով պարարտացնելու աշխատութենէն աղատելու համար, կրակ կուտայ անտառի մը մէկ մասին. թող կը բակը թէ որ կ'ուզէ պէտք եղածէն աւելի տարածուի. ինչ որ ալ ըլլայ, երկ բագործը ապահով է որ առատ բերք պիտի վաստըկի ծառերու մոխրովը բեղնաւորած հողին վրայ ցանելով իրեն սերմանիքը: Հասկերը կտրելէն ետքը, վասն զի խոզանը ժողվելը դրժուար ըլլալուն համար անանկ կը ձգեն, հողուն մէջ մնացած արմատներն այրած չըլլալով կը ծլին հետևեալ դարնան թանձրախիտ ուռճաւորութեամբ, և քանի մը տարիէն եօթը կամ ութ ոտք բարձրութեան կը հասնին: Աս տեսակ անտառն է մաքի ըսուածը, ուր կը տեսնուին այլ և այլ տեսակ ծառեր և թուփեր, իրարու հետ խառնուած շաղուած ինչպէս որ բախտը կը բերէ: Անկարելի է որ մարդ առանց մէկ ձեռքը կացին ունենալու ճամբայ բանայ հոնտեղ, և անանկ խիտ և տերեւալից մաքիներ կը գտնուին որ նոյն խսկ վայրի ոչխարները չեն կրնար մտնալ:

Թէ որ մարդ մը սպաննած ես, բորդոյ-Վէքքիոյի մաքին գնա, և հոն սպահով կ'ապրիս, աղէկ հրացանի մը, վառողի և գնտակներու հետ. մի մոռնար առնելու նաև կնդղաւոր մթկեկ վերարկու մը որ վերմակի և անկողնոյ տեղ կը ծառայէ: Հովիւները քեզի

կաթ, պանիր և շագանակ կուտան, և դատաւորներէն կամ սպանելոյն ազգականներէն ամենսին մի վախնար, բայց եթէ երբոր պաշար առնելու համար քաղաքը կ'իջնաս :

Մադէոյ ֆալգոնէին տունը, երբոր ես կորսիկան էի 18-ին, մաքիէն կէս փարսախ հեռու էր. նոյն երկրին համար բաւական հարուստ կը սեպուէր աս մարդս, ազնուականօրէն ապրելով, այսինքն առանց գործողութիւն մը տեսնալու, իր ոչխարներուն բերած շահէն, զորոնք վրանաբնակ հովիւներ կ'արածէին ասդիս անդին լեռներուն վրայ: Երբոր տեսայ զինքը, պատմելիք դիպուածէս երկու տարի ետքը, շատ շատ յիսուն տարեկան երսցաւ ինծի: Երևակայէ կարճահասակ բայց յաղթանգամ մարդ մը, գուուզ մազերով որ սաստիկ սև էին, արծունոն քիթ, բարակ շրթունք, մեծ և կրակոտ աշուըներ, և դեղին երեսի գոյն մը: Հրացան նետելու մէջ ունեցած վարպետութիւնը արտաքոյ կարգի բան մը կը սեպուէր նոյն խակ իր երկրին մէջ ուր պակաս չեն աղէկնշան առնողները: Օրինակի համար, ոչ երեկը Մադէոյ պղտի գնտակիկներով՝ վայրի ոչխարի մը վրայ նշան կ'առնուր, հապա հարիւր քսան քայլ հեռաւորութենէ՝ զիսուն կամ ուսին՝ ինչպէս որ ախործէր գնտակ մը կշռելով՝ զետին կը պառկեցնէր զանիկայ: Գիշեր ատեն լցոս օրուան հաւասար կը գործածէր իր զէնքերը, և պատմած են ինծի իրեն վրայօք այս զարմանալի ճարպկութիւնս ալ որ կորսիկա չգացողի մը թերևս անհաւատալի գայ: Ութսուն ոտք հեռուն վառած ճրագ մը կը դնէին թղթէ տողաշարի մը ետև որ պնակի չափ մեծութիւն ունէր. նշան առնելէն ետքը կը մարէին ճրազը, և մէկ վայրկենէն ամենամուլթ խաւարի մը մէջ կը զարնէր և կը ծակէր տողաշարը, չորս անգամէն երեկը:

Այսպիսի գերազանց կարճութեամբ Մադէոյ ֆալգոնէ մեծ անուն հա-

նած էր: Աղէկ բարեկամ բայց միանգամայն վնասակար թշնամի կը համարէին զինքը. ուրիշ կողմանէ ալ ծառայելու պատրաստ և տրասէր ըլլալով, ամենուն հետ խաղաղութեամբ կ'ապրէր Բորդոյ-Վէքֆիոյի գաւառակին մէջ: Բայց կը պատմէին որ Գորդէ ուր որ կնիկը առած էր, շատ քաջութեամբ սպաններ էր իր նախանձորդը որ թէ պատերազմի և թէ սիրոյ մէջ ահաւոր մարդ մը կը սեպուէր. գոնէ Մադէոյի ընծայեցին հրացանի հարուած մը՝ որ զարկաւ զինքն երբոր պատուհանէն կախուած պղտի հայելոյ մը առջև ածիլուելու զբաղած էր: Բանը մոռցուելէն ետքը Մադէոյ կարգուեցաւ. իր Յովսէիինէ կինը սկզբան երեկ աղջիկ տուաւ (որ իրեն կատաղութեան պատճառ կ'ըլլային), և վերջապէս մանչ զաւակ մը որուն անունը զրաւ Ֆորդունագոյ. աս տղան ընտանեաց յոյաը, հօրը ժառանգն էր: Աղջիկները աղէկ կերպով ամուսնացած էին. հայրերնին պէտք ունենար նէ կրնար վստահիլ իր փեսաներուն դաշոյններուն և ատրճանակներուն վրայ: Տղան տասը տարեկան էր, բայց արդէն աղուոր ապազայի մը ակնկալութիւնը կուտար:

Աշնան օր մը Մադէոյ առաւօտանց կանուխ կինկանը հետ իր հօտերէն մէկուն այցելութեան գնաց մաքիին մէկ կողմը: Պղտիկ Ֆորդունագոն կ'ուզէր հետն երթալ, բայց տեղը հեռու էր, և անկէ զատ պէտք էր որ մէկը տունը պահպանութեան կենար, ուստի հայրը թող չտուաւ. ետքէն կը տեսնանք թէ չզղջաց ըրածին վրայ:

Քանի մը ժամ անցեր էր հօրը երթալուն վրայ, և պղտիկ Ֆորդունագոն հանդարտիկ պառկեր էր արեւոն զիմաց, կապոյտ լեռները դիտելով ու մըտածելով որ նոյն կիրակին քաղաք պիտի երթար տասնապես հօրեղբօրը տունը կերակուր ուտելու, երբ յանկարծ մտածութեանց թելը կորմնցուց հրացանի մը ձայն լսելով: Ոտք ելաւ և դարձաւ ձորին այն կողմը ուսկից թընդինը կը լսուէր. ուրիշ հարուածներ

վրայէ վրայ լսուեցան, անհաւասար միջոցներէ նետուած, և միշտ հետզհետէ մօտենալով. վերջապէս ձորը իջեցը-նող ճամբուն վրայ մարդ մը երեցաւ լեռնցիներուն պէս սրածայր գտակ մը դլուխը, մօրուանի, ցնցուտաւոր և հա-զիւ հաղ քալելով հրացանին վրայ կոթնած. զիստը գնտակ մ'առեր էր:

Այս մարդս աքսորեալ մըն էր որ գիշերանց ճամբայ իյնալով քաղաքը վա-ուղ գնելու համար, կորսիկացի թե-թելնժաց զօրաց դարանի մը մէջ ին-կեր էր. կտրճութեամբ ինքզինքը պաշտ-պանելէն ետքը կրցեր էր ձեռուլներ-նէն պրծիլ, թէպէտ հալածուած և ժայ-ռէ ժայռ հրացան պարպելով: Բայց զի-նուորներուն և իր մէջ քիչ միջոց կար, և վէրքին պատճառաւ վտանգի մէջ էր՝ մաքին չհասած անոնց ձեռքն իյնալու:

Ֆորդունադոյին քով գնաց և իրեն ըսաւ.

« Դուն Մադէոյ ֆալգոնէի զաւակն ես :

— Այո :

— Ես ձիանէդոյ Սանրիէրոն եմ. դեղին-օձիքները¹ ետևէս ինկեր են: Ծածկէ զիս, վասն զի ալ չեմ կրնար քալել:

— Բայց ի՞նչ պիտի ըսէ հայրս թէ որ առանց իրեն հրամանին ծածկեմ գրեղ:

— Պիտի ըսէ որ աղէկ ըրեր ես:

— Ո՞ զիտէ :

— Շուտ ըրէ ծածկէ զիս. գալու վը-րայ են:

— Սպասէ որ հայրս դառնայ:

— Սպասեմ. գրողը տանի. հինգ վայրկեննէն հոս կ'ըլլան: Քեզ տեսնամ, ծածկէ զիս չէ նէ կը սպաննեմ զքեզ:

Ֆորդունադոյ պաղ արեամբ պա-տասխանեց.

« Հրացանդ պարպուած է և մախա-ղիդ մէջ վառօդ չկայ:

— Դաշոյնս ունիմ:

— Բայց ինծի չափ արագ պիտի վա-

¹ Այն ատեն թեթևելնթաց զօրաց նշանա-զգեստն էր մթնագոյն վերարկու մը դեղին օձիքով:

զես »: Մէյմը ցաթքեց և բաւական հե-ռացաւ:

« Դու Մադէոյ ֆալգոնէի որդին չես. պիտի թողովս ուրեմն որ զիս բռնեն տանդ առջեւ:

Տղան կարծես թէ խղճաց:

« Ի՞նչ կու տաս ինծի թէ որ զքեղ ծածկեմ, ըսաւ քովն երթալով:

Աքսորեալը գօտիէն կախուած կա-շեայ գրպանի մը մէջ խոթեց ձեռքը և հինգ ֆրանգնոց ստակ մը դուրս հա-նեց զոր անշուշտ վառօդ գնելու հա-մար պահած էր: Ֆորդունադոյ ժպան-ցաւ արծաթ ստակը տեսնալով. ձեռքը առաւ զայն և ըսաւ ձիանէդոյին. « Ա-մենսին մի վախնար »:

Շուտով մեծ ծակ մը բացաւ չոր խոտի գէզի մը մէջ որ տանը քովն էր. ձիանէդոյ կկղեցաւ հոն, և տղան ծածկեց զինքը, այնպէս որ շունչ առ-նելու բաւական օդ ծծէ, սակայն ա-ռանց կասկած տալու որ խոտին տակ պահութած մարդ մը կար: Անկէ զատ վայրենիի յարմար բաւական հանճա-րեղ վարպետութիւն մ' ալ մոտածեց. գնաց էդ կատու մ' առաւ հանդերձ իր ծագերովը և խոտին վրայ դրաւ որպէս զի չիմացուի թէ քիչ մ' առաջ խառ-նուեր էր: Յետոյ տանը մօտ նըր-բաշաւդին վրայ արեան հետքեր տես-նելով, լաւ մը հող ցանեց վրանին և վերջը մեծաւ հանդարտութեամբ դար-ձեալ պառկեցաւ արեւուն դիմաց:

Քանի մը վայրկենէն վեց մարդիկ որ մթկեկ համազգեստ մը հագած էին դեղին օձիքով և սպայի մը հրամատա-րութեան տակ առաջ կու գային, Մա-դէոյի դրան առջեւ հասան: Այս սպան ֆալգոնէի չորրորդ պորտէ աղգական մըն էր: (Ծանօթ է որ կորսիկա աղգա-կանութեան աստիճանները շատ հե-ռու կը տանին ամէն երկրէ աւելի:) Անունը Դիոտորոյ կամպա էր, գործու-նեայ և աւաղակաց սարսափելի մարդ մը որոնցմէ շատերը արդէն զարկեր էր:

« Բարիլոյս, պղտիկ եղբօրորդեակս, ըսաւ ֆորդունադոյին քովն երթալով.

ան ինչպէս մեծցեր ես։ Փիշ մը առաջ տեսա՞ր մարդու մը անցնիլը։

— Ո՞հ, քեզի չափ մեծ չեմ դեռ, եղբօրորդիս, ըսաւ տղան ապուշ կերպով մը։

— Կամաց կամաց . բայց չտեսա՞ր մէ կու մը անցնիլը, շուտ ըրէ ըսէ։

— Մէկու մը անցնիլը։

— Այո, սրածայր և սեւ թաւիշէ գրտակով մարդու մը, որուն զգեստը խառն էր կարմիք ու դեղինէ։

— Սրածայր գտակով ու կարմիք ու դեղինէ խառն զգեստով մարդ մը։

— Այո, շուտ պատասխան տուր, և հարցմունքներս մի կրկներ։

— Այս առաւօտ ժողովրդապետը Բիէրոյ ձիուն վրայ հեծած մեր դրանը առջևէն անցաւ. հարցուց թէ ինչպէս էր հայրս, և ես իրեն պատասխանեցի.. .

— Ահ, սատանի ձագ, չարածճութիւնդ բոներ է։ Ըսէ շուտով թէ ուսկից անցաւ ձիանէդդոն. վասն զի զինքը կը փնտունք, և ապահով եմ որ աս ճամբէն գնաց։

— Ո՞ գիտէ։

— Ո գիտէ. ես գիտեմ որ դու զինքը տեսար։

— Մարդ քնացած ատենը կրնայ ուրիշներու անցնիլը տեսնել։

— Զէիր քնանար, անզգամ. հրացանի հարուածները գքեզ արթընցուցին։

— Միտք դրեր ես ուրեմն, եղբօրորդիս, որ հրացաններդ այնչափ կը թնդան. հօրս ատրճանտկը անոնցմէ շատ աւելի ուժով ձայն կը հանէ։

— Գետինն անցնիս, անիծած տղայ. լաւ գիտեմ որ ձիանէդդոն տեսար, թերես ծածկեցիր ալ։ Զեզ տեսնամ, կտրիճներս, մոտէք սա տունս և նայեցէք թէ հոն է մեր մարդը. մէկ ուժքով միայն կ'երթար անզգամը և գիտէր որ կաղալով չէր կրնար մաքին ապաւինիլ. արեան հետքերն ալ ահա հոս կը կենան։

— Ի՞նչ պիտի ըսէ հայրս, հարցուց ֆորդունագոյ ծաղրածութեամբ, ինչ պիտի ըսէ երբ որ իմանայ որ իրեն հոն չեղած ատենը տունը կոխուեր է։

— Փուճ արարած, ըսաւ կամպա ականջէն քաշելով, գիտես որ ձեռքս է լեզուդ փոխել տալը. գուցէ թուրիս տափակովը քսան հարուած մը առնելէդ ետքը շիտակը խօսիս։

իսկ Ֆորդունագոյ միշտ ծաղը կ'ընէր։

« Հայրս Մադէոյ ֆալգոնէն է, ըսաւ պարծենկոտութեամբ։

— Գիտես, չըլլալու տղայ, որ կը նամ տանիլ գքեզ գորդէ կամ Պատիքա։ Բանտի մը մէջ կը պառկեցնեմ գքեզ յարդի վրայ, ոտուրներդ շղթայի զարկած, և գլուխդ ալ կը կտրեմ թէ որ շրսես թէ ուր է ձիանէդդոյ Սանրիէրոն։

Տղան քըքիջ մը վերուց այս ծիծաղելի սպառնալիքին վրայ, ու նորէն կրկնեց. « Հայրս Մադէոյ ֆալգոնէն է։

— Սպայ, ըսաւ ցած ձայնով զինուորներէն մէկը, Մադէոյին հետ չաւրուինք։

Կամպա ընելիքը չէր գիտեր. կամաց ձայնով կը խօսէր զինուորներուն հետ որ արդէն բոլոր տունը տակնուվրայ ըրեր էին, թէպէտ և ասիկայ երկայն գործողութիւն մը չէր, վասն զի կորսիկացւոյ մը խրճիթը միայն քառակուսի խցիկէ մը կը ձեանայ, և կահ կարասիքն են սեղան մը, նստարաններ, սրնտուկներ, որսի կամ խոհանոցի գործիքներ։ Իսկ պղափիկ ֆորդունագոյն կը փայփայէր կատուն և չարածճի ախորժ մը կը զգար տեսնելով զինուորներուն և ազգականին շուարումը։

Զինուոր մը մօտեցաւ չոր խոտի գէզին. տեսաւ կատուն և հրացանին սուխնը խոթեց խոտին մէջ անհոգութեամբ և ուսերը թօթուելով իբր թէ իմանար զգուշութեանը ծիծաղելի ըլլալը։ Բան մը չշարժեցաւ, և տղուն երեսին վրայ այլայլութեան փոքրիկ նշան մ' ալ չերեցաւ։

Սպան և զինուորները յուսահատած արդէն աշուրնին դաշտին կողմը դարձուցեր էին իբրև թէ ուղենային եկած տեղերնէն ետ դառնալու, երբ իրենց առաջնորդը համոզուելով որ սպառնա-

լիքները ֆալգոնէի տղուն վրայ ազդեցութիւն պիտի չընէին, վերջին փորձ մ' ուզեց ընել գգուանքներու և ընծաներու իջնալով։

«Պղտիկ եղբօրորդիս, ըսաւ, աշխոյժ տղայ մը կ'երեսիս ինծի. օր մը վարպետ պիտի ըլլաս. բայց հետո խաղացած կատակդ շատ անհամ է, և թէ որ Մադեյ ազգականիս անհաճոյ բան մը ընելէն չվախնայի, հաւատա որ գքեզ հետո կը տանէի։

— Բնակ :

— Բայց ազգականս դառնայ նէ եղածը պատմեմ պիտի իրեն, և սուտ խօսած ըլլալուդ համար ինչուան ոսկորներուդ ծուծը խարազանը պիտի հասցընէ։

— Այսինքն,

— Կը տեսնաս . . . բայց նայէ . . . լաւ տղայ եղիր և քեզի բան մը կու տամ։

— Ես քեզի խրատ կու տամ, ազգականս, որ եթէ դեռ ուշանալու ըլլաս՝ ձիանէդոն մաքին կը հասնի, և ան ատեն քեզի պէս շատ կտրիճներ պէտք կ'ըլլան զինքը վնտուելու երթալու համար։

Սպան արծաթէ ժամացոյց մը հանեց զրպանէն որ տասը սկուզի արժէք ունէր. և զիտելով որ Ֆորդունադոյին աշուշներն սկսան փայլիլ, ժամացոյցը պողպատեայ շղթայէն կախ բռնած ըսաւ իրեն։

«Խարդախ, քեզի համար շատ ախորժելի բան պիտի ըլլար ասանկ ժամացոյց մը վիզդ կախելը, և բորդոյՎէքիոյի փողոցներէն սիրամարդի պէս կամկար կամկար քալելու ատենդ երր որ մէկը մէկալը քեզի հարցընէին թէ ժամը քանի է, դուն պատասխան պիտի տայիր թէ ժամացոյցս նայեցէք։

— Մեծնամնէ տասնապետ հօրեղբայրս կու տայ ինծի ժամացոյց մը։

— Այս, բայց հօրեղբօրորդիդ արդէն մէկ հատ մ' ունի . . . թէպէտ ասոր պէս աղուոր չէ, և դուն անկից մեծ ալ ես։

Տղան հառաջեց։

— Կ'ուզե՞ս ուրեմն աս ժամացոյցը, պղտիկ եղբօրորդեակս։

Ֆորդունադոյ աչքին ծայրովը ժամացոյցը դիտելով կը նմանէր այն կատուին որուն ամբողջ հաւ մը կը ցուցընեն. զիտի որ միտքերնին հետը խաղալ է, անոր համար չհամարձակիր ճանկը զարնելու, և երբեմն երբեմն աշուշները մէկդի կը դարձնէ որպէս զի փորձութենէն յաղթուելու վտանգին մէջ չինայ. բայց վրայէ վրայ պոկոնքները լզուրուտելով կարծես թէ կ'ըսէ տիրոջը. ինչ անգուժ կատակ է ըրածդ։

Սակայն կամպայի միտքը ժամացոյցը ցուցնելով խաղալ չէր։ Ֆորդունադոյ ձեռքը չերկընցուց, բայց թթու ժպիտով մը ըսաւ իրեն. « ինչու կը ծաղրես զիս։

— Բաւ լիցի, չեմ ծաղրեր գքեզ, միայն ըսէ թէ ուր է ձիանէդոն, և աս ժամացոյցը քուկդ է։

Ֆորդունադոյ դարձեալ ժպտեցաւ չհաւատալով ըսածին. և սեսըւուկ աշուշները սպային աշուշներուն վրայ տնկելով, կը ջանար կարդալ անոնց վրայ թէ որչափ հաւատք պէտք էր ընժայել ըսածներուն։

— Ուսանոցս կորսնցընեմ, կանչեց սպան, թէ որ այսու պայմանաւ ժամացոյցը քեզի տալու չըլլամ. ընկերներս վկայ են, և խօսքս չեմ կրնար ուրանաւ։

Աս ըսելով հետղէետէ կը մօտեցնէր ժամացոյցը, այնչափ որ շօշափեց տղուն գունաթափ թուշը. խեղճին երեսին վրայ յայտնի կը տեսնուէր ներքին պատերազմը ժամացոյցն առնելու և հիւրը չմատնելու մէջ. մերկիկ կուրծքը ուժով ուժով կ'ուռէր և կարծես թէ հիմա շնչահեղձոյց պիտի ըլլար։ Ժամացոյցը կը ճօճէր, կը դառնար և երբեմն քիթին ծայրին կը հանդիպէր. վերջապէս կամաց կամաց աջ ձեռքը բարձ. բացաւ դէպ 'ի ժամացոյցը, մատուշներուն ծայրերը դպան. ժամացոյցը ձեռքին մէջն էր բայց շղթային ծայրը բրոներ էր սպան։ Երեսը երկնագոյն էր . . .

խուվը դեռ նոր փայլեցուցած ... արեւուն առջեր բոլորովին կրակ կտրած կ'երևար ... փորձութիւնը խիստ սաստիկ էր :

Ֆորդունադոյ ձախ ձեռքն ալ վեր հանեց և բութ մատովը ուսին վրայէն ցուցուց ետևի չոր խոտին դէզը . սպան մէկէն 'ի մէկ միաքը հասկըցաւ . թողուց շղթային ծայրը , Ֆորդունադոյ տեսաւ որ միայն իրեն ձեռքը մնաց ժամացոյցը . այծեման պէս ցամքելով չոր խոտին դէզէն տասը ոտք հեռացաւ և զինուորները սկսան շուտ մը խառնել զայն :

Եւ ահաւասիկ խոտը սկսաւ շարժիլ , ու երեցաւ արիւնաշաղախ մարդ մը ձեռքը դաշոյն . ոտք ելլալու ջանացած ատենը պաղած վէրքը թող չըտուաւ որ շիտակ կենայ ու վար ինկաւ . սպան յարձըկեցաւ վրան և ձեռքէն յափշտակեց դաշոյնը . շուտով պրկեցին զինքը թէպէտ և ինքը կը կուուէր ու չէր ուղեր թող տալ :

Ճիանէդդոյ գետին փոռուած ու բեռան մը պէս կապկըպած , գլուխը ֆորդունադոյին դարձուց որ մօտեցեր էր : « Զաւակ ... » ըսաւ աւելի արհամարհանք քան թէ բարկութեամբ . տղան իրեն երեսը նետեց առած ստակը , իմանալով որ ալ արժանի չէր անոր . բայց պքսորեալը բանի տեղ չղրաւ այն շարժմունքը , ու ըսաւ հանդարտութեամբ սպային . « Սիրելիդ իմ կամպա , չեմ կրնար քալել . պէտք է որ դուն տանիս զիս քաղաք :

— Քիչ առաջ եղնորթէ մը արագ կը վազէիր , վրայ բերաւ անողորմ յաղթականը . բայց սիրտդ հանգիստ բոնէ . այնպէս ուրախ եմ զքեզ բոնելուս համար , որ փարսախ մը տեղ շալակս զարկած կը տանիմ զքեզ առանց յօդնելու : ինչ որ է նէ , ճիւղերէ և վերարկուէդ պատղարակ մը կը շինենք քեզի , և գրէսրովի ձիեր կը ճարենք :

— Շատ աղէկ , ըսաւ գերին . պատգարակին վրայ քիչ մը յարդ ալ դիր որ աւելի հանգիստ ըլլամ » :

Մինչդեռ զինուորներէն ոմանք զբա-

ղած էին շագանակենիի ճիւղերէ պատգարակ մը շինելու , ոմանք ալ ճիանէդդոյին վէրքը պատելու , յանկարծակի երեցան Մագէոյ ֆալգոնէ և իրեն կինը մաքին տանող ճամբու մը գլուխը : կինը շագանակի խոշոր պարկ մը կը ունակած առաջ կու գար , իսկ ընկերը հանդարտ քայլով ձեռքը հրացան մը բոներ էր , ուրիշ հրացան մ'ալ ուը ընդանութ կախած , վասն զի էրիկ մարդու մը համար նախատինք է իրեն զէնքերէն զատ ուրիշ բեռ մը կրել :

Զինուորները տեսածին պէս Մագէոյ՝ մնաքէն անցուց որ զինքը բոնելու եկեր էին . սակայն ինչէն այս մտածութիւնը . միթէ արդարութեան տալու հայիւ ունէր Մագէոյ . ոչ երբէք . իրեն անունն աղէկ ելած էր . բայց այսպէս կամ այնպէս՝ կորսիկացի էր և լեռնցի . և քիչ կը գտնուին կորսիկացի լեռնցիներ որ իրենց յիշողութեանը աղէկ հարցնեն նէ քանի մը պղտի պղտի մեղքեր չգտնեն , ինչպէս են հրացանի հարուած , դաշոյնի հարուած և ուրիշ ասոնց նման չնշին բաներ որոնց խօսքը չըլլար : Մագէոյ որ և իցէ մարդէ աւելի մաքուր խղճմուանք ունէր . վասն զի տասը տարուընէ 'ի վեր հրացանը մէկու մը վրայ ալ չէր պարպած . սակայն խոհեմ ըլլալով պատրաստուեցաւ ինք զինքը պաշտպանելու թէ որ այնպէս հարկաւոր ըլլար :

« Կին , ըսաւ Յովսեփինէի , զետին դիր պարկդ և պատրաստ կեցիր » . մէկէն հնագանդեցաւ . իրեն տուաւ ուը ընդանութ կախած հրացանը որ կրնար իրեն արգելք ըլլալ . լեցուց ձեռքինը , և ծանր ծանր քայլերով առաջ գնաց դէպ 'ի իր տունը՝ ճամբան պատող ծառերուն տակէն , և դիմացէն թշնամութեան պղտիկ նշան մըն ալ տեսնելուն պէս պատրաստ ամենէն մեծ կոճղին ետե պահուըտելու որպէս զի հոնտեղէն հրացանը պարպէ : կինը ետեէն կու գար , ձեռքը բոնած իրեն փոխնորդ հրացանը և վառօղի մախաղը . կատարեալ տանտիկնոց մը պաշտօնը պատերազմի միջոց էրկանը հրացանները լեցնելն է :

Դիմացէն սպան ալ մեծ տագնապի մէջ էր տեսնելով Մադէոն որ այնպէս առաջ կու զար յամրաքայլ՝ հրացանն երկընցուցած և մատը երկաթին վրայ։ Եթէ, կը մոտածէր, դիպուածով Մադէոն ձիանէդդոյին ազգական կամբարեկամ ելիէ եւ ուզենայ զինքը պաշապաննել, իր երկու հրացաններուն հարուածները պիտի հասնին մեզմէ երկութին, ինչպէս որ նամակ մը կը հասնի իրեն տեղը, ու թէ որ յանկարծ ազգականութիւնը բանի տեղ չդնելով ինձի նշան առնու……

Ասանկ տարակուսի մէջ ընկած մեծ կարճութիւն մը մտածեց, այսինքն մինաւորիկ Մադէոյի ընդ առաջ երթալ, որպէս զի եղածը պատմէ, հին ճանչուորի մը պէս քովս երթալով. բայց իր և Մադէոյի մէջ եղած կարճ միջոցը սաստիկ երկայն երեցաւ իրեն։

« Ի՛շտ, իշտ, ծերուկ բարեկամն, կը պոռար, ինչպէս ես, կտրիմս։ Ես եմ, կամպան եմ, եղբօրորդիդ։ »

Մադէոյ առանց պատասխան մը տալու կանկ առեր էր և մէկալին խօսելու ատենը կամաց կամաց վեր կը բարձրացնէր հրացանը, այնպէս որ սպային իրեն հասած միջոցը բոլորովին դէպ ՚ի երկինք ուղղուած էր։

« Բարի լոյս, եղբայր, ¹ ըսաւ սպան ձեռքն իրեն երկնցնելով. շատ ատենէ ՚ի վեր տեսած չեմ գրեզ։

— Բարի լոյս, եղբայր։

— Քեզի և բէբա ² ազգականիս բարես տալու եկեր էի անցնելուս միջոցը. երկայն առուտուրմ՝ ըրինք այսօր, բայց չեմ ցաւիր յօգնելուս վրայ, որովհետեւ մեծ որս մընէ. ձիանէդդոյ Սանրիէրոն ձեռուընիս է։

— Փառք քեզ, Տէր, կանչեց Յովսեփինէ. անցեալ շաբաթ աղէկ կաթուող այծ մը գողցաւ մեզմէ։

Այս խօսքերուս վրայ ուրախացաւ կամպա։

¹ Buon giorno, fratello, Կորսիկացւոց սովորական բարեն է։

² Բէբա Giuseppa այսինքն Յովսեփինէ անուան փաղպահականն է։

« Խեղճ մարդ, ըսաւ Մադէոյ, անօթի էր։

— Անզգամի առիւծի մը պէս պաշտպանեց ինքզինքը, առաջ տարաւ սպան քիչ մը շփոթած. զինուորներէս մէկը սպաննեց, և աս ալ բաւական չսեպելով Շարտոն տամնապետին թեւը կոտրեց. բայց մեծ կորուստ մը չէ, որովհետեւ գաղղիացի է այս մարդս։ . . . Յետոյ այնպէս աղէկ պահուըտեր էր որ սատանան ալ չէր կրնար գտնալ զինքը. առանց պղտիկ եղբօրորդուոյս ֆորդունապոյին օգնութեանը ոչ երբէք զանիկայ կրնայի գտնալ։

— Ֆորդունապոյ, աղաղակեց Մադէոյ։

— Ֆորդունապոյ, կրկնեց Յովսեփինէ։
— Այո՛, ձիանէդդոն սա չոր խոսի դէզին տակ պահուըտեր էր. բայց եղբօրորդեակս ցուցուց ինծի իրեն վարպետութիւնը. Անոր համար պիտի ըսեմ իր տասնապետ հօրեղբօրն՝ որ իրեն աղուոր ընծայ մը խրկէ. իրեն և քու անունդ ալ պիտի գրեմ առ ընդհանրական փաստաբանը զրելիք տեղեկագրոյս մէջ։

— Անիծած ըլլայ, ըսաւ ցած ձայնով Մադէոյ։

Հասան մէկալ զինուորներուն. ձիանէդդոյ արդէն պատգարակին վրայ էր և երթալու պատրաստ. երբոր տեսաւ Մադէոն և կամպան մէկտեղ, այլանդակ կերպով մը ժպտեցաւ. յետոյ դէպ ՚ի տան գուռը գառնալով թքաւ սեմին վրայ ու զուրցեց. « Մատնըշի մը տուն։ »

Միայն մահը աչք առած մարդ մը կրնար մատնչի անունը բերնէն հանել ֆալգոնէի համար. դաշոյնի աղուոր հարուած մը զոր կրկնելը աւելրոդ կ'ըլլար՝ մէկէն նախատանաց վրէժը կ'առնուր. Սակայն Մադէոյ ուրիշ ձև չըրաւ բայց եթէ ձեռքը ճակատը տանիլ վշտացած մարդու մը պէս։

Ֆորդունապոյ հօրը գալը տեսնելով տունը մտեր էր. քիչ ատենէն զուրս ելաւ ձեռքը կաթի ըմպանակ մը բըռնած և զետին նայելով ձիանէդդոյի

Հրամցուց զայն . « Կորիր դիմացէս » աշղաղակեց պքառբեալը սոսկալի ձայնով մը . յետոյ զինուորներէն մէկուն դառնալով « Ընկեր , զուրցեց , ջուր տուր ինծի » : Զինուորը իրեն տուաւ ջրին ամանը և ձիանէդոյ խմեց այն մարգուն տուած ջուրը՝ որուն հետ հրացանի հարուածներ տուեր առեր էին . վերջէն խնդրեց որ ձեռուրները կուրծքին վըրայ կապեն փոխանակ կոնակը կապելու . « Կ'ուզեմ հանգիստ պատկիլ » ըստ : Կատարեցին իրեն այս փափաքն ալ , և սպան ճամբայ իյնալու նշանը տալով արագ արագ քալելով ձորն իջաւ :

Տասը վայրկենի չափ Մադէոյ չրացաւ բերանը . տղան անհանդարտ աչքով մէյմը մօրը կը նայէր մէյմը հօրը , որ հրացանին վրայ կոթնած բարկացայտ աչուրներով կը դիտէր զինքը :

« Աղէկ սկսար , զուրցեց հուսկ ուրեմն այնպիսի հանդարտութեամբ մը որ զինքը ճանչցողին համար սարսափելի յառաջաբան մ' էր :

— Հայր իմ , պոռաց տղան արտասուալից առաջ գալով իրեն ոտքն իյնալու համար : Բայց Մադէոյ աղաղակեց . « Հեռացիր ինձմէ » : Եւ տղան անշարժ կեցաւ և սկսաւ հեծկըլտալ հօրմէն քանի մը քայլ հեռու :

Յովսեփինէ մօտեցաւ . տեսեր էր ժամացուցին շղթան որուն մէկ ծայրը ֆորդունագոյին շապիկէն դուրս կ'ելլար :

« Ո՞վ տուաւ քեզի այս ժամացոյցը , հարցուց զաժան կերպով մը :

— Եղբօրորդիս՝ սպան :

Ֆալգոնէ ձեռք առաւ ժամացոյցը և ուժով քարի մը զարնելը ու կտոր կըտոր ընելը մէկ ըրաւ :

« Եին , ըստաւ , աս տղան իմս է » :

Յովսեփինէի թխորակ թուշերը աղիւսի պէս կարմիր կտրեցան :

« Ի՞նչ կ'ըսես , Մադէոյ . դիտես թէ որուն հետ կը խօսիս :

— Ահաւասիկ այս տղաս իրեն ցեղին մէջ առաջինն է որ մատնութիւն մ'ըրաւ :

Ֆորդունագոյ սկսաւ ալ աւելի հեկեկալ , իսկ ֆալգոնէ քաւթարանման աշուրները վրան սևեռած կեցեր էր . վերջապէս հրացանին կոթը գետին զարկաւ . ետքէն ուսը նետելով զայն մաքիին ճամբէն սկսաւ երթալ ֆորդունագոյին ձայն տալով որ ետևէն գայ . տղան հնազանդեցաւ :

Յովսեփինէ վազեց Մադէոյին , և թեէն բոնելով , « Քուկին որդիդ է , ըստ գողդոյուն ձայնով մը սև սև աշուրները էրկանը աշուրներուն վրայ տնկելով , որպէս թէ ուզենար կարդալ անոնց վրայ իրեն մտքէն անցածը :

— Թող տուր , պատասխանեց Մադէոյ . ես իրեն հայրն եմ :

Յովսեփինէ գրկեց զաւակը և լալով տնակը մտաւ . ինկաւ ծնրադիր Աստուածածնայ պատկերի մ' առջեւ ու ջերմեռանդութեամբ աղօթեց : Իսկ ֆալգոնէ երկու հարիւր քայլ մ' առնելով ճամբուն մէջ ձորակ մ' իջաւ ու հոն կանկ առաւ . հրացանին կոթովը զարկաւ գետինը և տեսնալով որ կակուղ էր և զիւրաւ կրնար փորուիլ , իրմտածութեանը պատշաճ սեպեց այն տեղը :

« Ֆորդունագոյ , այդ խոշոր քարին քով գնա՞ » :

Տղան կատարեց հօրը հրամանը , վերջը ծնկան վրայ եկաւ :

« Բաէ աղօթքներդ :

— Հայր իմ , հայր իմ , մի սպաններ զիս :

— Բաէ աղօթքներդ » կրկնեց Մադէոյ սարսափելի ձայնով մը :

Տղան կէս մը կակազելով կէս մը հեկեկալով ըստաւ Հայր մեր մը և Հարատամքը : Հայրը իւրաքանչիւր աղօթքը լմնցնելուն Ամէն կը պատասխանէր :

« Այսափ են զիտցած աղօթքներդ :

— Հայր իմ , Ողջոյն քեզ Մարիամը և լիթանիան ալ զիտեմ զոր հօրաքոյըս սորվեցուցած է ինծի :

— Լիթանիան երկայն է , բայց հոգչէ :

Տղան նուաղեալ ձայնով մը լմնցուց լիթանիան ալ :

« Դեռ կայ :

— Ո՞հ, հայր իմ, ներէ, թողութիւն տուր ինծի . մէյմ' ալ չեմ ըներ . այն-շափ կ'ազաշեմ տասնապես եղբօրորդիս որ ձիանէդոն չեն մեռցներ : »

Խօսքը բերանն էր դեռ երբոր Մադեյ հրացանը լեցուցած նշան կ'առնէր զուրցելով . « Աստուած թողութիւն տայ քեզի » : Տղան յուսահատ շարժում մ' ըրաւ ոտք ելլալու և հօրը ծընկուրներուն պլլուելու համար, բայց չըհասաւ . Մադեյ հարուածը խրկեց և աչք բանալ գոցելու միջոց ֆորդունադոյ ինկաւ անշնչացեալ :

Մադեյ առանց աչք մը տալու դիակին՝ սկսաւ տունը դառնալ բահ մ' առնելու համար որպէս զի զաւակը թազէ . քանի մը քայլ հազիւ ըրեր էր ու ահա Յովսեփինէ հրացանի հարուածէն սարսափած դէպ 'ի իրեն կը վազէր :

« Ի՞նչ ըրիր, աղաղակեց :

— Արդարութիւն :

— Ո՞ւր է տղան :

— Չորին մէջ . թաղելու կ'երթամ . քրիստոնէի պէս մեռաւ և հոգւոյն համար պատարագ մը զուրցել պիտի տամ : իմաց տուր Գիոտորոյ Պիանքի փեսայիս որ գայ հետերնիս բնակի » :

ԲՐՈՍՔԵՐ ՄԵՐԻՄԵ

ԳԱՂԱԽԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

(Տե՛ս էջ 289:)

Բուսէն . ինչպիսի անուն բերնէս կը հանեմ : Եթէ Լքսիւէու զգացման նկարիչն է, Բուսէն մոտացն է . կարծես թէ նկարչութեան փիլիսոփայն է . իր պատկերները կրօնական կամ բարոյական դասեր են որ կը յայտնեն մեծ միտք մը և մեծ սիրտ մը : Հերիք է անուանելն իօթն խորհուրդները, Զրհեղեղը, Արկադիան, Ճշմարտութիւնը զոր ժամանակը կ'ազատէ նախանձու ձեռքէն : Դարձեալ Գաղղիոյ համար, իրեն Շանդլու բարեկամին համար խաւրեց չոռմէն Պողոս Առաքելոյն յափըշտակութիւնը, ինչպէս նաև Եօթն սուրբ խորհրդոց երկրորդ շարայարութիւնը, որ մեծ աշխատութիւն մ'է և մոտածութեանց բարձրութեամբը կրնայ մըցիլ Ռափայելի Սդանցէներուն հետ : Այս խօսքերս փորազրութենէն դատելով կ'ըսեմ, վասն զի Եօթն Խորհուրդները Գաղղիա չեն : Յաւիտենական ամօթ Ժլ դարուն . զոնէ Պարթենոնի ճակատ ները Յունացմէ յափշտակուած են .

Մարդկային կենաց կաքաւը : Բուսէնի ոճը մոտածութեանը չափ բարձր է . կ'ուրուազրէ Փլորենտացւոյ մը պէս, Գաղղիացին պէս կը բաղադրէ, և շատ անգամ կը հաւասարի Լքսիւէուի բացատրութեանը մէջ . միայն գոյներուն խառնուածը թերի է : Նման Ռաախ նեայ ինքն ալ կը սիրէ հին գեղեցկութիւնը և անոր կը նմանցնէ . բայց Ռասինի պէս ինքն ալ միշտ նախատիպ է : Լքսիւէուի անզուգական պարզութեանը և շնորհքին տեղ ինքն ալ ունի սաստիկ պարզութիւն մը հանդերձ այնպիսի ուղղութեամբ զոր ոչ երբէք կը թողու : Պէտք չէ նաև մոռնալ որ ամէն տեսակներն ալ փորձած է . մեծ նկարիչ է թէ պատմութեան և թէ գաշտորայից . այնպէս աղէկ կը յաջողցնէ կրօնից նիւթերն ինչպէս հեթանոսականքը, և հետզհետէ կ'ընդունի իրեն ներշնչմունքն հնութենէն և Աստուածաշնչն : իրաւ է որ շատ կեցած է չոռմ և հոն ալ մեռած է . բայց Գաղղիա ալ աշխատած է, և զրեթէ միշտ Գաղղիոյ համար . հազիւ թէ իրեն ով ըլլալը ճանչցուեցաւ, Ռիշիէօկանչեց զինքը բարիզ և հոն պահեց՝ առատ պատիւներ տալով իրեն և անուանելով առաջին նկարիչ թագաւորին և վերակացու արքունի ապարանից ամէն պատկերներուն և զարդերուն : Բարիզ երկամեայ բնակութեանը միջոցնկարեց Վերջին ընթրիքը, Ա. Փրանկիսկոս Քառակամին համար խաւրեց չոռմէն Պողոս Առաքելոյն յափըշտակութիւնը, ինչպէս նաև Եօթն սուրբ խորհրդութիւնը, ինչպէս նաև Եօթն սուրբ խորհրդութիւնը, որ մեծ աշխատութիւն մ'է և մոտածութեանց բարձրութեամբը կրնայ մըցիլ Ռափայելի Սդանցէներուն հետ : Այս խօսքերս փորազրութենէն դատելով կ'ըսեմ, վասն զի Եօթն Խորհուրդները Գաղղիա չեն : Յաւիտենական ամօթ Ժլ դարուն . զոնէ Պարթենոնի ճակատ ները Յունացմէ յափշտակուած են .